









~~Արքիքառական կույտեր~~

Հիմքամիջեց

Ահա Հ. Ա. Խաչիկ - պատճենահանձնութեան

**ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Country

ԳՐԱԴԱՐԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ

891.99

Բ - 14

ԱՐԴՅՈՒՆ է 1961 թ.

ՆԻԿ. ՔԱԼԱԶ

ԲԱՆԱԱՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ


ԳԻՐՔ ԱՐԱՋԻՆ



1923


30379

A T  
6205



**ԱԿԱՑԻԱՆԵՐ**

**1911—1917**



\* \*

Դու ինձ համար, վորապես աղոթք ես,  
քնար,  
աստվածուհի, աստղաշար ջինջ կամար:

Աշնան լճակ, հեռու յերգի լույս մըմունջ,  
հեղ ուռենի, մանուշակի թովիչ փունջ:

Տխուր կարապ, իրիկնային անուշ սյուք,  
մարմար արձան, մարդարիտե արտասուք:

## ԱՌԱՋԻՆ ՀԱՄԲՈՒՅՐ

Լիճը թափվող ակացիայի թերթերի պես,  
վերջալույսի շողերի պես ալ ու վոսկի,  
վորպես բարձր ժայռի վրա հովվուհու հեղ  
թրթռացող սրտի յերգը առանց խոսքի:

Վորպես լուսնի կաթե ցոլքը ցողոտ  
թուխպից,  
ցուրտ ճակատիս, վորպես սարսուռը լճակի-  
դողդողացին քո մանկական շուրթերն  
անբիծ,  
ինձ մատնեցին յերանավետ տառապանքի...

## ՅԵՐԵԿՈ

Վորպես տխուը միայնության անուշ  
աղոթք,  
վորպես սիրո կախարդական ապարանջան,  
վորպես կույսի մահը խաղաղ, հողեմոբմոք,  
վերջալույսի շողերը ցուրտ շիրիմ իջան...

Վորպես թավիշ ու ծաղկաշունչ թախիծն  
հոգուս,  
վորպես լճում կարապի նուրբ, արծաթ  
թեվեր,  
քնարի պես խորհրդավոր, քեզ պես քնքույշ,  
ինձ պարուրում ե յերազուն մի սուրբ ստվեր:

\* \*

Մի սուրբ յերեկո քո խաղաղ ժամին,  
յերբ շուրջու թանձր խավարը պատի,  
դուռդ կծեծի վիրավոր քամին,  
մի գունատ տերեկ խուցդ կնետի...

ՅԵՌ եմ այն, դարձած ստվեր, անքուն  
վիշտ,  
յեկել եմ, վորպես անկայան տերեվ,  
—արդյոք կտամս ինձ մի անուշ հանգիստ,  
մի ցող ջերմ համբույր, մի փունջ հույս—  
արեվ:

\* \*

Յերբ ես մեռնեմ, իմ անգին,  
 թաղիք լճի յեզերքին,  
 թող խոնարհվի հավիտյան  
 վրաս քնքույշ ակացիան...

Գերեզմանիս քո ձեռքով,  
 բոցոտ, ցավոտ արցունքով  
 փորագրիք իմ վրա—  
 թե ինչ վշտից ես մեռա:

**ՀԵՔԻԱԹ**

Թովիչ ափերով, մի անհայտ յերկրում  
կա նոճիազարդ մի արծաթ լճակ,  
ու նրա ափին մարմարեն, սիրուն  
կա խորհրդավոր մի դաղտնի տնակ:

Այն լուռ տնակում ապրում և մի կին,  
վոր հավետ տխուր՝ աղոթքով լոին  
միշտ յերազում ե, սպասում մեկին,  
գիշեր ու ցերեկ արցունքն աչերին:

Շուրջը գիշեր ե, ծանր լոռվթյուն,  
լոկ նոճիներն են հեծեծում վշտով,  
ու կարապները լողում են տրտում...  
նա աղոթում ե հուսով, կարոտով:

\* \*

Վառ աստղերն իմ սրտի  
դողացին ու ընկան,  
հուր վարդերն իմ շուրթի—  
համբույրներըս հանգան:

Քո ցավերը կապար  
ծանրացան իմ կրծքին,  
յես հիվանդ ու թափառ,  
կարոտիցդ, ի'մ անգին:

Հին հուշերս են լալիս  
մշուշում դժգունակ,  
հեռավոր սիրելիս,  
յես մենակ եմ, մենակ:

Կ Ա Ր Ո Տ

Վորպես թավիշ հասմիկները պերճ  
հարեմի  
այնպես թախծնվ, մեղմաշինթ,  
քո սենյակի կապույտ մութում հիմա կիջնի  
լուսնի շողը հեզ յերեսիդ...

Դու լուսաթեվ յերազիշպես հուշիկ ու  
լուռ  
գաշնամուրիդ կ' մոտենաս,  
ստեղները կ' թըթուան անուշ, տխուր  
մառներիդ տակ նուրբ, դալկանազ:

Յերբ նվազիդ թրթիռները ուղղես յերկ-  
նին,  
լույսերի մեջ, գիտես, հոգիս,  
թե զու վորքան խորհրդավոր, այդ վայր-  
կյանին  
վորքան դյութիչ պիտի լինիս:

## ՀԱՎԵՐԺ ՍԵՐ

Մեկը մենավոր ու սեվ շորերով,  
խաղաղ ու հանդարտ վերջալույսներին,  
ձեռին ծաղկեփունջ, հուշիկ քայլերով  
լայն փողոցներով անցնում ե լոէն:

Մոլոր ու անփույթ քայլերով, արտաւմ  
գնում ե դեպի գերեզմանատուն:

«Անցած որերին հազար յերանի»...  
մըմնջում ե նա ու փունջը իրա  
սիրուն փռում ե շուրջը մի շերմէ,  
ու մեղմ հեծեծում ցուրտ քարի վրա:

\* \*

Նա ինձ ասաց, դու անվիատ սպասիր,  
յերբ մութն իջնի յերազի պես ես կ' գամ.  
Նա ինձ ասաց, դու խավարում յերազիր  
իմ լուսեղեն հանդիպումը մոգական:

Նա ինձ ասաց, ես քեզ համար հեռավոր  
բախտի վոսկի փակ դռները կ' բանամ,  
Նա ինձ ասաց, այն աշխարհում լուսավոր  
յերջանկության ծաղիկներն են անթառամ:

Նա ինձ ասաց, յԵլ, խորտակիր վիշտը քո,  
հոգիդ ցողիր ցնորքներով Դյութական.  
Նա ինձ ասաց, ո, դու ամեն յերեկո  
միշտ յերազիր ու սպասիր, ես կ' գամ:

\* \*

Կրկին իմ այգում  
 պաղ տերեվաթափ,  
 վարդերս դժգույն  
 խենթ քամին շտապ  
 նետում ե հեռու...

Յես չեմ տրտնջում,  
 յերգում եմ «վողջույն»...  
 Հիշում եմ մի որ  
 յես ել քամու պես  
 խենթ ու թեվավոր  
 անցել եմ այդպես:

A 6205  
3037.9



\* \*

Զեր պարտիզում  
մի յերազուն  
իրիկուն,  
մի լույս տեղից  
իջավ թախիծ  
ու շրջուն...

Շողը վոսկի,  
թերթը ծաղկի  
գաղտնանազ  
համբուրվեցին,  
մեղմ ցողեցին  
բռւյը, ալմազ...

Նրանց կամաց  
սույլը մնաց  
իմ յերկում,  
ձեր պարտիզում,  
մի յերազուն  
իրիկուն:

**ԲԱՆԱՏԵՂԾ ՄԻՍԱԿ ՄԵԽԱՐԵՆՑԻ  
ՀԻՇԱՏԱԿԻՆ**

Մեծարենցի անուշ կարոտը սրտիս,  
այս յերեկո զետափ իջա յես մենակ,  
«հոյ, հոյ գետը», նրա նվազը շուրթիս,  
ափսոսացի, կսկծացի գժզունակ...

Ուռին վրաս մարմանդ, մարմանդ հով  
արեց,  
խենթ ալիքը արծաթ փրփուր եր նետում.  
«Ո՞ւր ես արդյոք, տաղանդավոր Մեծարենց»  
հեծեծանքս թրթում եր զեռ ողում:

Մթնշաղի սարսուալի թեվի տակ  
գողում եյինք ես, ուռենին, զետը պաղ...  
աչերիցս կաթեց գոհարը հստակ,  
ու շուրթերիս սառեց՝ «Միսակը, ավաղ»...

\* \*

Քեզ չեմ մոռացել, իմ վոսկի՛ անցյալ,  
 հին խաղաղ որե՞ր, ծաղիկնե՞ր պայծառ,  
 քնզ եմ աղոթում ու սիրում դարձյալ,  
 հուշերիդ փարվում կարոտով անծայլ,  
 քեզ չեմ մոռացել, իմ անուշ անցյալ...

Քեզ չեմ մոռացել, իմ առաջին սեր,  
 իմ փառքի դափնի՛, իմ դողդո՞ջ քնար,  
 քո՞նն են վերստին և ցավ, և հույսեր,  
 քո՞նն են այս դժգույն յերգերս անմար,  
 քեզ չեմ մոռացել, իմ առաջին սեր...

\* \*

Յես դարձել եմ սյուլք, յերազանք,  
համակ թախիճ, համակ քնքշանք...

Նուրբ ե հոգիս ծաղկի նման,  
վորպես պայծառ ցողը դարնան...

Վորպես առուն հեզ ճաճանչում,  
վոսկեմըմըւնջ յերգս եմ հնչում...

\* \*

Պուրակում առուն ե մեղմ ծորում  
 իր յերգը մարդարիտ,  
 — և անունն ե հիմա թրթում  
 վարդաթերթ շուրթերիդ...

Ժպտիդ պես ակացիան նազելի  
 ծաղիկներն ե բացել.  
 — Բվ ե քո մայիսյան շորերի  
 ծերմակով շացել:

\* \*

Վորպես հողմածեծ տերեվը աշնան,  
վորպես մռացված վորբը դժգունակ,  
յերկնքից ընկնող ասուպի նման,  
անհույս դողում եմ լուսամուտիդ տակ...

Դու չզիտես այդ, քնած ես անդո՞րը,  
դմւ, իմ յերազած քնքույշ հրեշտակ,  
իսկ ես քեզ համար յերգում եմ որոր,  
ու անուշ հալվում լուսամուտիդ տակ:

\* \*

Քո գըկի ծաղկոցում, ո, լսի՛ր,  
 իմ թավիշ որորոցը հյուախի՛ր,  
 ժպիտներդ արա ինձ ծածկոց,  
 քնացընը իմ հոգին ալեկոծ...

Յերբ իշնի զով գիշերը գարնան,  
 որորի՛ր ինձ անուշ մոր նման,  
 համբուրի՛ր շրթունքներս դողդոջ,  
 յես ծարավ եմ հոգու լույս քրոջ...

\* \*

Վորպես լույս յլեռազ,  
վորպես հին հուշեր,  
մեղմ իջավ վրաս  
աստղազարդ գիշեր...

Թուփերը մեղմիկ,  
լճակը մշուշ,  
թռչուն ու յեղնիկ  
հանգչում են անուշ...

Ու հեռու, այնտեղ  
լուռ ծնրած հիմա,  
վորպես վառ կանթեղ  
աղոթում են նա:

\* \*

Գիշերը իջավ խաղաղ, անխռով,  
 ձայները մեռան հեռաւ յեզերքում,  
 նա ինձ մոտ նստած մեղմ, սիրազորով  
 թեվաբեկ հոգուս որոր եր յերգում...

Նիրհել են անուշ աստղեր ու վարդեր,  
 մութի քողի տակ լճակն եր ննջում.  
 մենք լճու ու արթուն նստած եյինք գեռ,  
 սուզված լուսեղեն, քնքույշ անուրջում...

\* \*

Վորպես թավիշ տերևների սոսավն անուշ,  
ու թևաբեկ հեզ թիթեռի ցնցումն անհույս,  
հրաժեշտի համբույրների մի սուրբ հնչյուն,  
գիշերի մեջ սիրո խոսքերը դողդոջնն...

Իմ հեռավոր, այդ ամենի պես մեղմագին  
դաշնամուրիդ նվազներն եմ հիշում կրկին,  
լույս անունդ ե իմ շուրթերին անուշ հնչում,  
կիզված սիրոս միայն, միայն քեզ ե  
տեհնչում:

\* \*

Յերանի թե նորից  
այս ահեղ ցավիս դեմ  
անջատման խավարից  
շողշողան ժպտադեմ  
աչերդ լուսակայծ,  
և վառեն վերստին  
իմ բոցերը հանգած,  
ծավալեն իմ չորս դին  
ծաղիկները վսեմ,  
և «ապրիր» ինձ ասեն...

\* \*

Ամպերը մոլոր ճայերի նման  
լուռ խոնարհվել են ջրերի վրա,  
կյանքս մատնել եմ հավետ թափառման,  
ու քամուն տվել հուշերդ, ի՞րա...

Ակացիան, վորպես արծաթե ժանյակ  
համեստ նազանքով թեքվել ե վրաս.  
—Ա՞հ, ինձ որորիք, մենակ եմ, մենակ,  
քնքույշ ակացիք, իմ ճերմակ յերազ:

\* \*

Հիշմամ ես դու, այն գիշեր  
 լուսնկա յեր և լճում  
 ալիքները տօտղահեր  
 ծփռմ եցին, մեզ ճոճռմ...

Հիշմամ ես դու, ձնաքդ նուրբ  
 հանգչում եր իմ ճակատին,  
 հիշմամ ես դու, սրւրբ, իմ սուրբ,  
 իմ թախծալի մեղեղին:

\* \*

Արծաթաշող ակացիաները հիմա  
զով լճափին բույր են մաղում իմ վրա.  
— «Յերդվում եմ, վոր քեզ կախեմ մինչև  
մահ»...

մեղմ զնզում են վոսկի խոսքերը նրա:

«Այս լճակը, ծաղիկները, լուսնկան  
իմ կուսական մրմունջները թող լսեն,  
ինձ յերգերդ ալեկոծել են այնքան,  
ցնորել եմ լոկ քո անունը վսեմ»...

Սոսափներով ակացիաները հիմա  
բույր են խնկում, անուշ յերաղ իմ վրա.  
«Յերդվում եմ, վոր քեզ կախեմ մինչև  
մահ»...

դողմում եյին վերջին խոսքերը նրա:

\* \*

Արդյոք մվ պիտի իր սիրո վոսկի  
 արեվածագով գիշերս ցրի.  
 այնպես կարոտ եմ հուսատու խոսքի,  
 ջերմ զուրզուրանքի ու համբույրների...

Գերեզմանի պես ցուրտ ե ու մթին  
 իմ մենությունը համը ու ցավո՞տ.  
 արդյոք մվ պիտի իմ մեռած սրտին  
 ավետե անո՞ւշ, պայծառ առավոտ...

\* \*

Ակացիա, սոսի,  
գեղի ինձ հոսեք ձեր խռւնկե զինին,  
թող ձեր մետաքսի  
պերճ սաղարթների անդո՛քը հովանին  
յերազի նման  
մեղմիվ ինձ ծածկի, ու մի ակնթարթ  
գո՛ւցե մեղմանան  
ցավերա անհուն ու քնեմ հանգա՛րտ...

\* \*

Հիմա ՞ւմ ես քնքույշ, քնքույշ դու  
սիրում,  
՞ւմ հոգին ես քո հույզերով փոթորկում,  
ո՞, մի՞թե ինձ մոռացել ես, իմ սիրուն,  
ել անցյալից վոչի՞նչ չկա քո հոգում...

Հիմա ՞վ ե քո շուրթերը համբուրում,  
՞վ ե անհուն քո աչերով հիանում,  
՞ւմ դեմքին ես վարսերիդ ծովը փռում,  
՞ւմ հետ արդյոք վոսկի ժամերդ անցնում:

\* \*

Խոհուն նստած եմ հայելու առաջ,  
 թարմ կնճիռներս դիտում եմ նորից.  
 իմ հիվանդ կըծքում կա մի լո՛ւռ հառաչ,  
 և թափառման սեր—մանկության որից:

Տեսնում եմ արդեն հստակ հայելում  
 ցոլում են գլխիս արծաթե թելեր.  
 ինձ համար միայն սիրտս ե ցավում,  
 և վողբում անցնող իմ կյանքը ջահել:

\* \*

Լի՞ճ, այս գիշեր դո՛ւ նրա տեղ ինձ  
որորի՛ր,  
աստղե՛ր, նրա աչերի պես թարթե՛ք վրաս,  
մշո՛ւշ, նրա ձեռների պես ինձ պարուրի՛ր,  
անուշ հովե՛ր, դո՛ւք բերեք ինձ անդո՛րը  
յերազ:

Ակացիանե՛ր, ձեզ եմ պարզել շուրթերս  
հուր,  
քնքշալի համբուրեցե՛ք ձեր Անուրջին.  
թափիշ վարդե՛ր, փայփայեցեք վարսս  
գանգուր,  
ձեր ալ բույրերը խառնեցեք իմ հառաչին:

Դիշերային անուշ սոսա՛ֆ, լույս յեղանա՛կ,  
թողե՛ք հոգիս միա՛յն ձեր նուրբ  
դյութանքն զգա.  
լճա՛կ, աստղե՛ր, սփոփեցե՛ք սիրտս մենակ,  
մինչև նորից հազա՛րանուշ աղջիկս զա:

**Ա Շ Ո Ւ Ն**

Ակացիաներս են թառամել, հոգիս տխրե՞ւ,  
հին վշտի պես, աշնան նման շուրջս լոել...

Լիճը ծա՞նը վիրավորի աչքերի պես  
մերթ փայլո՞ւմ ե, մերթ նվազո՞ւմ պաղ,  
վորպես ես:

Բույր ու կանաչ խոնարհվել են դեպի  
շիրիմ,  
ել դարձ չկո՞ մեռնող լճին, ծաղիկներին...

Այս հողմակոծ չոր ճյուղերին, գունատ  
ափին  
ել չի՞ ծագի քո հայացքի վոսկի արփին...

## ԲՈՒԽԱՐՈՒ ԱՌԱՋ

Վորապես հրդեհի լեզուները տվ,  
 վորապես ինձ կա՞չող շուրթերդ բոսոր,  
 վորապես շեղջերով վոսկի ու գոհար,  
 բուխարին անո՞ւշ վառվում ե այսոր...

Վորապես բոցերի դյութական առու  
 հոսում ե քեզ մոտ յերգը իմ հոգու.  
 յես վայելում եմ թովքը բուխարու,  
 վորապես կրակի խե՞նթ յերկրպագու:

\* \*

Զեր գեղեցիկ, քնքույշ ձեռներն, ո՞, տիկին,  
խո՛րը, հավետ հմայել են իմ հոգին...,

Նրանց անառաջ հրաշք շողերը վոսկի  
ինձ մատնել են թափառումի՛, ցնորքի՛...

Զեր ձեռները, վոր լուսինն և արծաթել,  
մե՛ղմ պարզեցեք դեպի շուրթերս յեթեր...

**Ս Պ Ա Ծ Ո Ւ Մ**

**Ժամերս են սահում զանդաղ, վորպես  
դար,**

**սիրտս տխուը և բայաթու նման,  
շուրթերս են անուշ հնչում անդաղար՝  
—յերբ կ'զա արդյոք ժամը հանդիպման...**

**Աչքերս եմ սուզել ճամբիդ արծաթի,  
կուրծքս և բարձրանում հեղեղի նման,  
յեթե ուշանաս սիրտս կ'պայթի,  
—յերբ պիտի զարկի ժամը հանդիպման:**

\* \*

Պարզի՞ր համբուրեմ ձեռներդ մրսած,  
 այդ մելամաղձոտ աչերդ անփույթ,  
 գուցե նա յես դու, բաղդս յերազած,  
 իմ յերկած սիրո ափերը կապույտ...

Մոտեցի՞ր, սրտիս կրակի առաջ  
 քո դողը կ'անցնի մի ակնթարթում.  
 դու կը մոռանաս հոգնություն, հառաչ,  
 կ'ը պայծառանա հայացքդ տրտում...

Հուշերդ պատմի՞ր, յես լուռ կ'լսեմ,  
 թափառումներից մռւթ, արկածալի՛,  
 հոգուս շմտ ե մոտ զրույցդ վսեմ,  
 կյանքդ անկայան, խենթ ու սիրելի:

\* \*

Կըկին գիշերն իջավ հսկա քաղաքում,  
սիրտս մենակ սրսփում ե, սրսփում.  
գիշերն բնչպես անցնեմ անտուն ու անքուն,  
մենությունից սարսափում եմ, սարսափում...

Փողոցները ամայանում են արդեն,  
դադարում են ծիծաղ, նվազ ու ծնծղա.  
լոկ թհւյն ունեմ, հազար անեծք ես քո զեմ,  
դու դարձրիր ինձ արջմոլիկ մի տղա:

Հ Ո Ւ Տ Ա Բ Զ Ա Ն

1917—Փետրվար



Ն Ի Շ Ա Վ Ո Ւ Թ Ե Հ Տ Շ Ա Տ Ա Կ Ի Ն



Ա.

Զեփյուռը խաղաղ գերեզմանոցի,  
վորպես արձագանք սրտիս թախիծի  
հպվեց ճակատիս թեթեվ սարսուսով,  
յես սթափվեցի ու իմ աչքերով

Տեսա ահռելի վոճիրն իրական,  
տեսա, թե ինչպես մի խոր, նեղ գոսում  
թաղեցին քնքոյշ սիրտդ հայրական,  
կորար իմ աչքից անդարձ մշուշում...

Բ.

Դեռ հարբած եմ սպիտ զինով պաշտե՛լի,  
 քո կսկիծից դեռ իմ հայացքն ե դեղին,  
 դեռ հոսում են արցունքներս լի ու լի,  
 մաշում եմ դեռ գերեզմանիդ թարմ ուղին...

Ծանը գիշերն իջավ սրտին իմ հիվանդ,  
 մրմում են թարթիչներս մեղմորեն  
 յես դեռ յերկար պիտի կրեմ հնազանդ  
 հոգուս վրա մետաքսե սև ժապավեն:

Գ.

Հիշում եմ հայացքդ արծվենի,  
ճակատդ, վորպես ծովը յերկնի,  
աչերդ յերազուն, մանկական,  
մազերիդ ձմեռը դյութական...

Հիշում եմ...ու թվում ե կըկին  
գիշեր ե, յես մանուկ մեղմագին  
լայն կըծքիդ հանգչում եմ քաղցրալուր  
լուսեղեն հեքիաթիդ անձնատուր...

Հիշում եմ գգվանքդ քնքշասուն,  
համբույրներդ անուշ ու հոսուն,  
հիշում եմ...բայց դատարկ ե չորս դիս...  
փուշ պսակն ե խոցված ճակատիս:

Դ.

Մեկը վոսկեղեն յերազներ սրտին  
արծվի նման թռչում ե հեռու,  
չ գիտե, ինքը կզարկվի՞ զետին,  
չ գիտե, վաղը ի՞նչ ե լինելու...

Կարապը կապույտ լճակի վրա  
արծաթ նազանքով լողում եր թռվիչ,  
գիշերը հնչվեց մահերգը նրա...  
լճակը նորից անդորր ե ու ջինջ...

Սյուքի հպումով, վորպես լույս ցնորք  
շուշանը քնքույշ կոկոնն ե բացում,  
լոկ մի ակնթարթ... հողմը անողոք  
նրա լուսատենչ թերթերն ե խանձում...


Նա ել եր ապրում, յերեկ ժպտադեմ  
աչքերը անուշ թարթում եր վրաս.  
բայց այսոր, ահա, մարած ե արդեն,  
յերեկ ու այսոր—յերազ ե, յերազ...



ԵԼԵԿՏՐԱ

ԲԱՍԻՆՈՒՄ

1913 — Թիվ 1



## Ա.

ՅԵԿ, բոստանս, այստեղ սիրուն ե այնքան,  
քաղցրությունն ե սիրուդ նման ծովացել  
ունիմ «սուլթան» մեղրապոպներ գովական,  
շամամներն են ծծերիդ պես մեծացել...

Իսկ սեխերը—նարինջազույն ու ճերմակ  
քաղցը են Շահի ոշաբակից առավել,  
արեվծաղիկը քնքշություն ե համակ,  
վարունգները քանիսներին են թովել...

Ճերեկն այստեղ յերազի պես ե անցնում,  
արեվն, ասես լինի անուշ հին գինի,  
կյանքը այնպես հոգիդ ել չի ցավեցնում,  
ու գիշերը մի հեշտալի՛ հով ունի:

Բ.


Այսոր ես քեզ ուղարկեցի մի շամամ,  
ներիր, վոր ել չունեմ մի այլ անգին իր,  
հուսով եմ, վոր չես պահանջի, թե գնիր  
մատի, վզի զարդարանքներ աննման...

Հուսով եմ, վոր իմ նվերը հասարակ  
կ' համարես աղամանդից առավել,  
թանկ ե միայն իրար հավետ ծարավել,  
միայն լինի մեր սրտերում ծռվ կրակ...

Այսոր ես քեզ ուղարկեցի մի շամամ,  
ներիր, վոր ել չունեմ մի այլ անգին իր,  
հուսով եմ, վոր չես պահանջի, թե գնիր,  
վարսի, վզի զարդարանքներ աննման:

ԿԱԶԵՑԻ ՅԵՐԳԵՐ

*1917—1920*



\* \*

Յեղաբեր, սիրելը, արքելը, Անուբան,  
ով Բնչ կռւզի, թող խոսի.  
Վհչ մեկի դեմ չանես տրտունջ,  
թող լոկ յերգդ միշտ հօսի...

\* \*

«Ճերմակ Շուշկա», բոլորն այդպես են  
կանչում,  
թույլ տվեք, վոր ես ել այդպես ձեզ  
ասեմ,  
անեյացել եմ ձեր ճերմակ ճաճանչում,  
ժպիտներում ձեր հմայրդ ու վսեմ...

Ինձ ամեն որ վաճառում եք կաթութեյ,  
վայրկյաններով հետև անուշ զրուցում,  
հրահրում իմ մեջ վոսկի մի նրդեհ,  
սիրտս լցնում խելացնը հիյացում...

Յես սիրում եմ ձեր իրանը նոճենի,  
ձեր աչերը արևելքի խոր գիշեր,  
ձեր շուրթերը Արտաշատի հին գինի,  
ձեր ձեռները քնքուշաթերթ շուշաններ...

Ել չեմ տեսնում վոչի՞նչ, վոչոք աշխարհում,  
ել չեմ կարող զուը յերազել ես հանդարտ.  
Շուշկա, յերգով եմ ձեր առաջ խոնարհվում,  
իմը յեղեք մի լուսեղեն ակնթարթ:

\* \*

Ծաղկային իմ Շուշկա,  
 յերբ վոսկի մի լույս գա,  
 յերբ թովիչ ու վսեմ  
 ձեր անուշ «գու»—ն լսեմ,

Թվում ե, վոր պիտի  
 բախտից սիրտս պայթի,  
 յես սառեմ, վորպես քար,  
 կամ դառնամ խելագար:

\* \*

Վորպես բոցմտ մըևելցի մի տղա,  
 նրա սառը գզվանքներից ես փախա,  
 արևի դեմ ինչ ե դողդոջ լուսնկան,  
 իմ սըտի մեջ հուրհուրմում ե լոկ Շուշկան...

Ճերմակ Շուշկան ինձ տանում ե սըճարան,  
 խենթի նման հետեւում եմ ես նրան.  
 սըտիս անուշ հրամանին միշտ հլու,  
 յես զնում եմ նրա կըծքին խաչվելու:

\* \*

**Յերաժշտության հնչյունների հետ.**

*յես սիրատոչոր*

*խառնվել եյի աղմուկին, ծխին  
ձեր սրճարանի,*

*ուր աչքիս առաջ պատկերանում եր  
դյութական մի ձոր,*

*արծաթ ջրերում անուշ շղփյունը  
ձեր յերազ մարմնի...*

*Վորի դեմ վարդերն հարյուրաթերթյա  
ինձ համար անբույր,*

*Սայաթ նովայի թովիչ նվազը  
մի դատարկ հնչյուն,*

*և կարապների ձերմակությունը  
լոկ մի ափ փրփուր,*

*լուսինն ինձ համար խավարել եր ձեր  
թավիշ ճաճանչում...*

\* \*

Վոսկի կիտրոնը անուշ հովանի,  
 Շուշկա, քո ձեռքով մի բաժակ գինի,  
 ու վարդանոցում, վառ գորգի վրա,  
 թառի նվազը վրաս թրթուա...

Շուշկա, յերդվում եմ ես քո արեով,  
 արբեցողների լույս զերեզմանով,  
 աստղերը, ծովը, ճերմակդ վկա,  
 վոր յերբեք, յերբեք ել ինձ մահ չկա:

\* \*

Արևելքից ես յեկել,  
 այնքան կը ակ ես բերել,  
 այնպես խելառ ես զարկել,  
 վոր չեմ կարող համբերել:

Չո աչերում ծովացած  
 հրդեհ, հրդեհ միայն կա,  
 ով իրեն չի նետի ցած—  
 քո վոտքերը, իմ Շուշկա...

Շուրթերիդ ալը հզոր,  
 հայացքիդ նետը բոցի,  
 ինձ գարձրել են այսոր  
 մի փրփրուն կարմիր ձի.

\* \*

Վշտից մեռա, Ճերմակ Շուշկա, գինի բեր,  
յես խելազար այսոր ուզում եմ արբել:

Այս ցուրտ որեղն ու մենությունը  
դաժան  
կցրի լոկ գինու շիշ սրբազան...

ՅԵԿ, գինի տհւը, այնպես ծարավ եմ,  
Շուշկա,  
ո, գինու մեջ յերանավետ մի լույս կա,

Գինին միայն ինձ կ'տանի դեպի վեր,  
գինին միայն կամոքի սիրտս ավեր:

\* \*

Սիրածուփ, գաղտնալի՛, քնքշածով  
 զիշերներ լուսնկա,  
 հարբածի, լուսնոտի նման ես որորվում  
 եմ, ժպտում.  
 այս ի՞նչ պերճ, թավշազարդ նավի մեջ ես  
 ընկա  
 ձեռներդ թիյերի նման ինձ մեղմ հեռու յեն  
 նետում:

Նվազում են, առես մի թովիչ յեղանակ  
 յերկնքում,  
 լճակի հայելուց ասաղերը առկայծում են  
 վրաս,  
 շուրթերդ ճակատս պսակում վարդերավ  
 վոսկեգույն,  
 բաց կրծքիդ վրփուրից ծավալվում ե  
 ճերմմակ մի յերազ:

\* \*

**ՓՐՓՈՒՐԻԴ ՆԱԽԱՆ, ՀԱՄԲՈՒՅՐԻԴ ՊԵԽ**  
**ԱՊԵՐՃ,**

Կարմիր հին գինեխն պարսպուամ եմ անվենքի,  
Խելառ խմում եմ կենացդ անգին...

**ՓԱԽԼ ԵՍ ՉՈՎՐՁԱ մԵՂՐԵ մՐԳԻ ծՈՎ,**  
**յԵՍ ՊԱՐՆԱՎԵԼ Եմ քո անուշ բոցով,**  
**մԱՍՆՎԵԼ անդարձ քո լույս հործանքին:**

\* \*

**Շնուշկա, կուրծքդ լճից վճիտ, ցնորմւն,**  
**զգեստներդ ժանյակազարդ նուրբ մշուշ,**  
**քո աչերը ինչ կրակոտ են ցոլում,**  
**Մթունքներդ կարմիր զինու պես անուշ...**

**Այդ բոլորը Սայաթ Նովուն ավելի**  
**կալեկոծնը, կներշնչեր հազար խաղ,**  
**խոսիր, խոսիր իմ փրփուրե նազելի,**  
**ել Անուրջը ինչպես նայի քեզ խաղաղ:**

\* \*

Յեթե դուք խմեք իմ յերգած գինաց  
 լոկ մի վոսկի ցող,  
 ո, յեթե տեսնեք Շուշկայիս կուրծքը  
 ճերմակ, վորպես ձյուն,  
 յերգված եմ դուք ել կդառնաք ինձ ալես  
 խենթ ու արքեցող,  
 դուք ել չեք հիշի տհւն ու հայրենիք,  
 և ձեր աստծուն:

## ԱՐԵՎԵԼՔԻ ՄԵԾ ՑԵՐԳՉԻՆ

Վողջույն մեծդ խալիֆա,  
 կաֆես բաց և միշտ քո դեմ,  
 քեզ իմ կաֆեն ջերմ ընծա,  
 և վարդերս հրաղեմ...

Արքայական վոտքիդ տակ  
 թավիշ գորգերս եմ փռում,  
 հազար թրթիռ ու նվագ  
 այսոր քեզ եմ նվիրում:

Քեզ վողջույնս սրտագին,  
 համբույր վարսին քո ջահել,  
 արևելյան, թանկագին  
 գինի ունեմ քեզ վայել:

Քո մեծ յերգելն ամեն որ  
յերգվում են իմ կաֆեյում,  
բախտավոր եմ ես այսոք  
լինել քեզ հետ մի հարկում։

Խնդությունից քո առաջ  
ծնծղա, ժպիտ եմ դարձել,  
զինու դեմ ել ինչ հառաչ,  
խորթ ե տիսուը մտածել։

Բազմիլ սեղան, խալիֆա,  
ինձնից բարձր ու վերև,  
դռւ ել շուտով, իմ Շուշկա,  
բեր մեզ զինի ու արեւ

Թույլ տհւը գավաթս վոսկի  
Ճոնել անհուն քո յերգին,  
անունդ, առանց իմ խոսքի  
պիտի հասնի յերկնքին...

Կախարդական աստղի պես  
կաֆեներին միշտ լույս տաս,  
այսոր Շուշկաս այնպես հեզ  
աղախինդ ե լուսանազ:

Մեծ խալիֆա, որհնիք այս  
կաֆեն ու կյանքն հեթանոս,  
մեր խնճույքը լույս յերազ,  
գինիներն այս վոսկեհոս:

Հավատա ինձ, խալիֆա,  
 թող միշտ հնչվի սուրբ լեզուդ,  
 քո գոհար թառը վկա,  
 հարբածը չի խոսի սուտ,—

Ի՞նչ ել անցնի, ի՞նչ լինի,  
 աշխարհն ե մի սրճարան,  
 կյանքը անուշ հին զինի,  
 Շուշկաներով թրվոան:

Վողջույն մեծող խալիֆա,  
 կաֆես բաց ե միշտ քո զեմ,  
 քեզ իմ կաֆեն ջերմ ընծա,  
 և վարդերս հրադեմ:

\* \*

Անուշ աղջիկ, յեկ, Անուրջի խռոքը լոիր,  
 ջահել սրտիդ, վարկե բոցիդ գու ափսոսիր,  
 մի շղթայիր նուրբ թևերդ, թռիր ազատ,  
 թե չն անժամ Կճերմակեն վարտերդ սաթ:

Գինի խմիր, մենությունից ոգուտ չկժ,  
 թող չթոշնի սիրտը քեզ պես լավ աղջկա,  
 այս արեվին, ծաղիկներին գու ափսոսիր,  
 անաւշ աղջիկ, յեկ Անուրջի խռոքը լոիր:

\* \*

Դու կտազել ես մի ալ կտրմիր ժառավեն,  
ոյզ դրաշ ե, սրտիս համար առավեն...

Ով կտրող ե նայել լեռախող չհռոզվել,  
շարժումներիդ բոցի ծավում չսուզվել...

Իսկ յետ պոետ, ես տարվել եմ քո  
կտրմբով,  
խելթու արբել քո շամազայնի փրփռով:

Ի՞նչովես չ'երգեմ, ի՞նչովես ասեմ ես մեզա,  
յես պոետ եմ ու կը ակնա մի աղա:

\* \*

Այս աշունը, թե ինձ համար մահ ել  
բերի,  
դու ինձ հետ ես, ես ահ չունեմ, իմ լույս  
փերի...

Այս հեծեծող տերևկթափը ինձ չի խոցում,  
յես դեռ այնքան վարդեր ունեմ իմծաղկոցսւմ:

Վորքան արևն ինձ պաղ նայի, յես չեմ  
սարսի,  
իմ կաֆեյում յերգն ու գինին չեն պակասի...

Այս աշունը, թե ինձ համար մահ ել բերի,  
միշտ ինձ հետ ես, ես ահ չունեմ, իմ  
խենթ փերի:

\* \*

Յեկ, արքենանք, արևելցի իմ խենթ  
 Շուշիա,  
 Թաղ համբուրեմ փրփուրից նուրբ կուրծքդ  
 ալեկոնձ,  
 Քեզնից, գինուց դուրս ել կյանքում վոչինչ  
 չկա,  
 Լովեյիս զմբդ, դու մոռացման ծաղկե  
 ծածկոց:  
  
 Թելդ չեմ տա, յեթե ինձ տան ալմազե  
 սար,  
 հազար քարվան մետաքսաբեռ, վոսկիապատ,  
 արևահամ խնձորի պետ այտերդ ալ,  
 մահիկ հոնքերդ, շուրթերդ նուռ ու  
 շարբաթ:

Այդ թովչանքդ գինու նման թռղ ինձ  
 հուզի,  
 քանի սև վարսո չի տալիս պաղ ճերմակին,  
 բոլորն անենք, ինչ վոր մեր խենթ սիրտը  
 ուզի,  
 արբած անցնենք ջահելության պերճ  
 կիրակին:

\* \*

Կաֆեյում ունեմ մի կտվե դորտկ,  
 ու հազար կարաս կաըմիր գինով լի՛,  
 մի չինե զավաթ—կերտվածքը բարակ,  
 ստինքի ձևով, նուրբ հըաշալի՛...

Ունեմ Քիրմանի զովական խալի,  
 վրան ասեղնած հարեմը Շահի,  
 աչքը կտանի՛ ու սիրտը կայրի՛,  
 ով այդ նկարին մի վայրկյան նայի՛:

Ու մի քյամանչա սաղաֆում կորած,  
 Սայաթ Նովայի մատներին վայել,  
 յերբ նվազում եմ կաֆեյում ըազմած—  
 հաղթվում են բոլո՞ր սրտերը ջահել:

\* \*

Ասացին, Անհւրջ, Շահին Շուշկայիդ  
 համբավն ե հասել,  
 գոռոզ, չար հողին նախանձն ե խայթում  
 սև ոձի նման...

Պատմել են Շահին, Նրա զեմ ի՞նչ են  
 վարդերը գարնան,  
 Շահ Սանամ, Լեյլի, Հազարան բլբուլ չեն  
 հասնի նրան...

Ասացին, վայ քեզ, ահոելի Շահը կզա  
 քո վրան...

Ասացի, թող զա, յետ լոկ յերգերով իր զեմ  
 դուրս կզամ,  
 Նրա սնոտի սրի հեքյաթը ես վաղուց  
 գիտեմ.

Շահը ի՞նչ ե վոր Շուշկայով արբած հզմը  
 սրտիս զեմ:

\* \*

Ո՛, ի՞նչ հաճույք, ո՛, ի՞նչ հաճույք,  
 ի՞նչ խելագար, կարմիր խնճույք,  
 յերգի, պարի որորի տակ  
 խմել մարմինդ սպիտակ...

Հաշիշ ծուխում տարվել թառով,  
 շամամներով արբել դարով,  
 խելառ ծփալ, գնալ հեռու,  
 ուր վոր տանի նավդ սիրու:

\* \*


Յեթե ինձ համար մտաներով շուշան  
թովիչ նվազեն գիշեր ու ցերեկ,  
անուշ կայլակվի գինին սրբազան,  
սիրաս սավառնի խենթ, վորպես յերեկ...

Թե ձերմակ Շուշկան վոսկի համբույրով  
ճակատիս վառի արեգական թագ,  
ինձ տա մոռացում իր հուր փրփուրով,  
հույսը չթվա մի դառը կառակ...

Յեթե այդ լինի, յեռ ել չեմ զգա  
ձյունի փաթիլներ գլխիս սևահեր,  
կղառնամ, վորպես հեքիաթի արքա,  
հավիտյան ջահել, հախիտյան ջահել,

**Ω Ο Γ Ο Σ Ο Ζ Ή 8**

**1920**



Ա

Դիցուհու պես յերբ դուք անցնում եք  
 այդպես սեզ,  
 որդյոք ինչու վրաս չեք նայում, և,  
 խոսեք,  
 նախանձում եմ յերկնին, մի նայեք ել  
 վերև,  
 չե՞ վոր իմ սրտումն ել կան աստղեր ու  
 արև։

Բ.

Յերգում եմ, չկառ, վոր ինձ լսես, իմ  
 վոսկին,  
 մեր կեանքը ի՞նչ ե վոր, ախ, միայն  
 յերեք որ,  
 յԵկ, թող կյանքս անցնի առանց սև ու  
 սգի,  
 յԵկ, քանի ջահել եմ, չեմ զարձել ծեր  
 ու կոր։

Գ.


Յերբ նորից յերգելով սրճարան եմ  
գնում,  
յերբ զավաթն եռ պարզում, խենթ իմ  
գիրկը ընկնում,  
մոռանում եմ անդմբձ, վոր կյանքում  
արցունք կա,  
մոռանում եմ անուշ,, թե վաղը Բնչ կգա:

7.

Սրճարանը հիմա տաճարս եւ սրբազան,  
պաշտում եմ Շուշկային, նա իմ կուռքն եւ  
հիմա,  
թող թօշնի, հող դառնա իմ սիրտը  
յերգառան,  
յեթե յես, ուրիշին սիրտս տամ, սինչեւ  
մահ.

Ծ.

Քանի յերգ-պինի կա, չեմ հոգնի յես  
 կյանքից,  
 իմ ամիսը չեմ թողնի տռանց ոեր իս  
 յերբեք,  
 յես մի խենթ հեթանօս, զնոցեք իմ  
 հետքից,  
 քանի վոր ջահել եք—միշտ սիրեք ու  
 արբեք:



**Τ Ε Φ Ο Γ Ν Τ Α Φ**

**1920—1922**



**Մ Ո Տ Ե**

Հեյ, դարբին, դեն նետիր  
բոնության ժանտ շղթան.  
Նրա տեղ զարկ, կոիր,  
մուրճ, քլունկ ու գութան:

Մեզ պետք չեն շղթաներ,  
թող խավարը չքանա,  
զարկ ուժգին, անվեհեր,  
մոտ ե Այգը վաղվա...

## ԿՈՄՍՈՄՈԼԻՆ

Շարժվում են, վարժվում են, ձուլվում  
են նորերը յերկաթի,  
ալեկոծ են, հոծ են, ամրոց են շարքերը  
պահեստի:

Գալիքը ու նրանց ալիքը շաշրւմ ե, ուռ-  
չրւմ ե, թռչրւմ ե,  
խելառ ե, վարար ե ու վառ ե, որհներգը  
հնչրւմ ե...

Բանվոր են, զինվոր են, հնձվոր են,  
կանգնած են ու մեծ են.  
ու ամեն կողմից են, հողմից են ու բոց են  
ու բոց են:

## ՄԱՅԻՍԻ ՄԵԿԻՆ

Այսոր հեռու Հոնդոնում, Վաշինգտոնում,  
Փարիզում,  
Ամստերդամում, Հռոմում, Բրյուսելում,  
Բերլինում,  
արեվմուտքում խարխլած՝ տիրում և մի  
խենթ հուզում,  
վողջ բանվորներն այնտեղ Մայիսի Մեկն  
են տոնում...

Բոլենիները այնտեղ այսոր դարձել են  
կծիկ,  
ահից Տցնցվում են, զգում իրենց մահը  
մոտակա,  
այսոր ամեն մի բանվոր նրանց աչքում մի  
հրձիգ,  
կոմսոմոլիստը ահեղ հեքյաթային մի հսկա:

Այսոր բանվորը այնտեղ իր փոթորկոտ  
 հոգու մեջ  
 կարմիր Առաղի դյութական ճառագայթներն  
 ե շոյում,  
 գործադուլած, ցուցարար նրանց շարքերը  
 անվերջ  
 բոցե յերգը շուրթերին լոկ Մոսկովին են  
 նայում:

Այսոր Մոսկովին ե կանգնել յերկրագնդի  
 կենտրոնում,  
 տոնում ե մի հրաշք տոն,—Մայիսների  
 Մայիսն իր,  
 իր մեծ պատգամն ե ասում, ու շեփորել  
 հանդգնում,  
 թե բոլորի ապագան—միայն Մոսկովին ե  
 Կարմիր,

Առևս ԿԱՐՄԻՐ ՄԱՐՏԻԿՆԵՐԻՆ

Այս առավելագութ մեր Կովկասին՝ մոտ  
աշխարհին  
դուք ըերել եք եղբայրության կարմիր  
Սրե,  
դուք եկել եք կործանելու ինչ վաս ե,  
հին,  
դուք յեկել եք դարբնելու կյանքի նոր ձեզ,  
  
Զեր կըծքի տակ մի թրթուն սիրո եք  
ըերեւ  
մի սիրո անհուն, տիեզերքից մեծ ու  
խորին,  
ամենուրեք ազատության ըռոյր եք փռել,  
ըմց եք տվել, այնպես թովել դուք ըոլորին:

Այդ ձեր անցած, կարմրացած յերկրներում

ձեր զոհերից բողբոջել ե հազմը գարուն,  
վոսկի աստղեր եք վառել դուք խավարներում,

ձեր հաղթությունն ե փոթորկել հեռու հեռուն:

## ԲԱՆՎՈՐԻ ՀՆՏԱՆԻՔԸ

Հայրս բանվոր ե յեղել,  
 վորդիները վողջ բանվոր,  
 մեզ սուրբ կտակ ե թողել,  
 «Քրտնեք, կռվեք փառավոր»...

Մեկը դաշտում հաղթ մաճկալ,  
 մյուսը հուր դարբնոցում,  
 մեկը պոետ բոցավառ,  
 զարկհամ ենք ու ստեղծհամ:

Մեկը կարմիր բանակում  
 հինգ ճառագայթ ճակատին,  
 խրճիթում ենք բնակում,  
 հպարտ յերգը մեր շուրթին:

Մայրս, քույրերս կանգնած  
 կարմիր կանանց կուռ շարքում,  
 նրանց սրտերն են շիկնած  
 ազատարար փոթորկում։

Ըստանիքը բանվորի  
 հիշում ե հին որը սև,  
 կարգերը մեծ վամպիրի,  
 Եշաններին փոքր ու դեվ։

Թույնով հիշում ենք մենք դեռ  
 կողոպուտը մեր հոգու,  
 հիմա դարձած յերկրին տեր,  
 ամուր սեղմած մեկ-մեկու, —

Զուլված քրտնող, ստեղծող  
 Աշխատանքի Բանակին,  
 հարվածին մեր խենթ, ցնցող,  
 կործանարար մեր զարկին,

Վրեժի ծով հրդեհին  
 նրանք ել չեն դիմանա,  
 ու աշխարհը դաժան, հին  
 մեր դեմ պիտի կարմրանա:

Հայրս բանվոր ե յեղել,  
 վորդիները վողջ բանվոր,  
 մեզ սուրբ կտակ ե թողել —  
 «Քրտնե՛ք, կռվե՛ք փառավոր»...

ՇՈՒՏ ՀՆՁԵ՞Ր

Գերանդի, մանգաղ զնգում են, վայ  
լում  
գալու, ցորենի վոսկի արտերում,  
հասկերը ուրախ հնձվում են, խըշում,  
հնձվորների հետ մտերիմ խոսում...

Ասում են թե՝ «մենք առատ ենք այն-  
քան,  
ծովի ավաղից շատ միլիոն անգամ,  
հնձե՞ք, շուտ հնձե՞ք, մեզ շուտով տա-  
րեք;  
ամեն, ամեն տեղ լիություն արեք»:

Հնձվորներ ե'լ բոցավառ թափով  
հնձում են հուսով, հնձում շտապով,  
ցորենն ե զիկվում լիությամբ իրա  
ահոելի սովի շիրիմի վրա:

## ԴԱՐԲՆԻՆ

Դարբնոցը քոնն ե կրկին,  
 Թվ ղեմ կգա քո զարկին,  
 հըդեհվել ե ալ արփին,  
 զարկին, կարմիր հուր դարբեն:

Սև անցյալից ինչ վոր կտ  
 տհւը կրակին, զարկ հսկա,  
 թող հուրհուրա քուրան քո  
 տուավոտից յերեկո:

Մուրճիդ հարվածը յերկաթ  
 կայծում ե շեկ ճառագայթ,  
 զնզոցը յերգ ե կարծես,  
 վոր նոր կյանք ե տալիս քեզ:

Մուրճիդ ամեն զարկի հետ  
հինը կորչում ե անհետ.  
լոկ քհ զարկով պիտի գտ  
մի հաղթական ապագա,—

Յերբ տիեզերքը համայն,  
բոլոր ցեղերը միայն  
պիտի ապրեն անտագնապ  
Խոշհրդային խնդությամբ...

Դարբնոցը քննն ե կրկին,  
ևվ դեմ կգտ քո զարկին,  
հրդեհվել ե ալ արփին,  
զարկին, կարմիր հռւր գարբին:

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ


Փողոցում կիսաշեն շենքի դեմ  
տաշում են քարտաշները կանգնած,  
և ամ համար են քրտնում, ո, զիտեն,  
աշխատում, աշխատում մոլեգնած...

Լարվել ե մկանները նրանց,  
վառվում ե դեմքերը քրտնածով,  
փողոցում աղմուկ ե, անց ու դարձ,  
չեն նայում, կրավել են դործով...

\* \*

Դադարի ժամն և արդեն, ժխոր և  
 փողոցներում,  
 գործարանները հուժկու գործադադարն  
 են սուլում,  
 զբոսնողները հաստավիզ, խոնարհվեցնք  
 մինչ զետին,  
 և, հեռացնք մայթերից, ճամբա բացեք  
 ամեն դին...

Ահա գալիս են նրանք — հսկաները  
 շարեշար,  
 հզոր տերերը կյանքի, ճնշվածները  
 բյուր հազար,  
 ահա անցնում են նրանք, խոնարհվեցնք  
 դուք կրկին,  
 գլուխ տվեք հաղթական Աշխատանքի  
 Բանակին:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Ակացիաներ . . . . .	7—42
Հուշարձան . . . . .	47—50
Բոստանում . . . . .	55—57
Կաֆեյի յերգեր . . . . .	59—84
Չորս տողից . . . . .	87—91
Շեփորներ . . . . .	95—108
Բովանդակություն	
Վըիպակներ	



## ՎՐԻՊԱԿՆԵՐ

Ըերես	Թող	Տպված է	Գետ և լիճի
7	1	ՎՈՐԱՂԵՍ	միայն
25	1	ՅԼԵՐԱՎ	յերավ
63	1	ՄՐԱԵԼՇԻ	արևելշի
84	12	ՀԱԽԻՒԹՅԱՆ	հավիւթյան





ՀԱՅ (704)

A 1  
6205

ԳԻՆԸ 40 ԿՈՊ. ՎՈՍԿՈՎ

---

Թ. Զ. Գ.





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0041041

